

Քրիստոնեայ ԱՅՄՍՏԱՆ

ԱՄՅՐ ԱՌՈՒ Ա. ԷՏԻՄԱՏԻՆ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՆԱԲԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՇՈՅ. 1286 ք.



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Միքելի ժողովուրդ հայոց ի պիտոս աշխարհի:

Տոն է այսօր Հարություն:

Աստվածորդու թափուր գերեզմանից արարչական սիրո հաղորդության լույսով աստվածային փառքն է ճառագում մեր շուրթերից դեպի երկինք բարձրացնելով փառաբանության արոթըրը հոգեբույս. «Օրհնեսցուք ԳՏԻՐ, զի փառք է փառաբանել» (Ել, 1:1):


Մեր հայացքի առջև Տիրոջ խաչելությունից շփոթահար ու սարսափած առաքյալներն են, վիճափոր գերեզմանը Փրկչի, երկուդամ ինքնաբերական յուզաբեր կանայք, որ լուսազգեստ հրեշտակներից Ավետիսն են լուսն. «Ձի՛ խնդրեք գեղեցիկ ընդ մեռելայն, չէ աստ, քանզի յարեալ» (Լուկ., 24:5-6):

Ամենայն Հայոց Միաձայն Մայր Աթոռից անհուն բերկրանքով «Երեսուրթ Բրիտանոս» մեծապահ Վվետիսն ենք հղում եւ հայրապետական մեր ջերմ ողջույնը բերում առաքելական մեր Եկեղեցու ճիշտապետության արթունքի շնորհագարդ գահակալներին՝ Մեծի Տանն Կիլիկիո Ն. Ս. Օ. Տ. Ա. Րամ Ա կաթողիկոսին, Երուսաղեմի հայոց ամենապատիվ պատրիարք Ս. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսու հայոց ամենապատիվ պատրիարք Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանին, ուխտապահ ու ճկողյալ ողջ հոգեւոր դասին, հավատավոր համայն մեր ժողովուրդին՝ աշխարհի բոլոր կողմերում եւ Հայոց պետության ավագանուն՝ հանձնին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանին, Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանին, վարչապետ Արամ Սարգսյանին:

Միքելի՛ բարեպաշտ հայորդիք:

Աբստուկ տերունական հրավերն է խնդրության, կանգնած ենք մասնակից լինելու մահվանից դեպի կյանք, կորստից դեպի փրկություն տառնող աստվածային անհաս, խորին խորհրդին, որ մեզ՝ ամենքիս ընթերցելի է որպես հարություն մարդեղացյալ Աստվածորդու: Փրկագործության աստվածա-

«Փա՛ռք Քրիստոսի ամենագոր յարութեան»



յին առաքելության բազադրումն է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հարությունը, քանզի Աստված անապական ու անբալ իր սիրով ժամանակի մեջ մեզինք մեկը դարձավ եւ հանձն առավ յաչի ճանապարհին՝ անցնելով մահվանից դեպի կյանք, որպեսզի մեզ առաջնորդի կորստից դեպի փրկություն: «Ես եկի զի կեանս ունիցին եւ առավել եւս ունիցին» (Հովհ., 10:10):

Հարյալ Քրիստոս՝ յաչի ճանապարհը պսակելով կյանքի հաղորդությամբ: Հարյալ Քրիստոս, ընդմիջտ խորտակելով կապանքները դժոխքի ու մահվան: Հարյալ Քրիստոս, եւ «տիեզերք ամենայն նորափետուր գարդարեցան»:

Փա՛ռք Քրիստոսի ամենագոր յարությունը, որ հրաշակերտող իր խորհրդով 2000 տարի նորոգում է կյանքը Փրկչին հուսալի ժողովուրդներին:

Փա՛ռք Քրիստոսի ամենագոր յարությանը, որի հավատքի վեմին հաղթականորեն բարձրացավ Տիրոջ Տիեզերական Եկեղեցին: Նորապալ աշխարհը՝ հարության հույսին խառնված:

Ազատության, արդարության քրիստոնեական ընթերցումից,

ընտրվեցին որպես Աստծո «նոր ժողովուրդ» եւ նախախնամորեն շնորհին արժանացան՝ ճանաչելու Աստծո սերը մեր հանդեպ ու հարության հաղթանակող գործքները մեր կյանքում: Հարության լուսնը մեր ինքնությունը, Ավետարանով իմաստավորեցին մեր գոյությունը, հավատացին կյանքին, արդարին, գեղեցիկն ու ստեղծարար աշխատանքին: Հարության հավատով վերագտել ենք դարավոր մեր երազը՝ ազգային մեր պետականությունը, եւ թեպետ տագնապներով ու համընդհանուր անվստահությամբ է լեցուն ներկան, հարության հույսով ենք մայրում գալիքին: Սա է մեր իրականությունը:

«Մի երկնչիր, հոս փոքրիկ»՝ ժողովուրդը հայոց: Մեկ անգամ չէ, որ անցել ենք խաչելության ճանապարհը ու չափել մահվան գուրի խորությունը: Եվ ամեն անգամ մեր հոգու հույսի կայծը կրակ է դարձել ու բոցավառել՝ հառնելու մեր կամքը, հավերժի մեր ոգին: Մեր ժողովուրդի հարության վկան է այս հողը, որին կանգնած ենք, վկան են ջրերը Եփրատի, շիկացած ավազը Դեր Ջորի, որ անցնող դարավազին լեցուն էին հազարավոր հայերի անթիվ մարմիններով: Վկան են մեր տարագիր նախնիների հաղորդ սերունդները աշխարհապալու: Մի ժողովուրդը եղեռն է վերապրել: Սա նույն-պես մեր իրականությունն է:

«Ո՛ւր է, մահ, յաղորդիւնք»՝ մահն արհամարհող հարցադրումով: Կյանքի, հարության մույն հավատով եւ ինքնաբերական բոցավառ ոգով համախումբ՝ հայ ժողովուրդը ազատության իր իրավունքն է հաստատել հայրենիքում եւ պաշտպանել արդարությունը Արցախում: Սա եւս իրողության է, արդի մեր իրականություն է կանգնում ու նշանակալի, մեծարժեք այն մասը, որի փառքը երբեք չի կարող խամրել: Սակայն, ո՛վ գարնանը, մարդկային կյանքի ինչպիսի՛ չարախնդություն՝ դժվարությունների, գրկանքների ու կորուստների տասնամյա ճանապարհն ան-

ցած հայրենաբնակ հայության մույն սերունդն այսօր լուսն է հայրենիքը: Հանուն Հայաստանի ու Արցախի ամեն գոհողություն տանձնած փյուռքալոր տարակույսներ ու վարանումներ է ապրում: Անհանդուրժողությունն ու անհաշտությունը, հեռանկարի անորոշությունը անպատու ու մահաշունչ անտարբերությամբ եւ հուսալքությամբ են համակում ազգային-հասարակական մեր կյանքը, իսկ աճող արտագաղթը հայրենիքից՝ դառնում է առօրեական ու սովորական: Այո, հասկանալի են բազմաթիվ արդարացումները, սակայն ո՛չ ընդունելի, ո՛չ արդարացի, քանզի սա մեր իրականությունն է, եւ փախուստով չէ, որ պիտի չափվի:

Միքելի՛ հավատավոր ժողովուրդ:

Նոր դարաշրջան է բացվում աշխարհի վրա՝ հասարակական կյանքի նորացող ընթացքով, ժողովուրդների ու պետությունների հարաբերությունների նոր պահանջներով: Ազգային գործը պետականության միայն կարող ենք լիարժեք մասնակցություն ունենալ ժողովուրդների բազմակողմ հաղթանակում համագործակցությամբ: Ուրեմն, ո՛վ, եթե ոչ մենք՝ հոգեւորական ու աշխարհական բոլոր դասերով, ե՛րբ, եթե ոչ այսօր, կոչված ենք գործադնելու ազատ ու անկախ մեր հայրենիքը, միաբանվելու նրա շուրջ եւ համագաղթին միությանը կերտելու հայ կյանքը աշխարհափյուռ:

Հայրապետական մեր խոսքն ենք ուղղում, որպես պատգամ ու կոչ, հայրենաբնակ մեր սիրեցյալ զավակաց՝ չերկնտել ազատությունն ընտրելիս, բայց նախ՝ ազատությունն անկարթության պատրվակ չդարձնել: Նախաձեռնվաճողորեն պահել պանել գործելու արի կամքը, լավատեսության հոգին, մեր ժողովուրդին հուսուն անընկճելի ստեղծարար ոգին, միմյանց ապավինելու վստահությունը, որպեսզի հայրենիքը մեր դառնա կենդանաբար արյուն մղող, տրոփող հուժկու սիրտը հայության կյանքի:

Հարունակությունը՝ էջ 2

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՌԻԹՈՎ

2ի յաղթեց զոր չարին...
(Ա Յովհ., 2:13)

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ հայոց:

85 տարի է անցել ողբերգական այն օրերից, երբ օսմանյան Թուրքիան, օգտվելով Առաջին աշխարհամարտի պատեհությունից, Արեւմտյան Հայաստանում եւ Թուրքիայի հայաբնակ վայրերում իրականացրեց հայաջնջման իր հրեշտակալ ծրագիրը:

Մեր ժողովուրդը բազմադարյա իր կենսագրության մեջ շատ ու շատ է աղետահարվել ու կորուստներ կրել, բայց առանձնակի ցավ են տալիս մեր քանդակալ լուսավորչալ համարվող դարերում բուրբական կառավարության մշակած եւ ստանալով իրականացրած ջարդերը, որ ուղղված էին «հայկական հարցի» լուծմանը «չկա հայություն, չկա հայկական հարց» սկզբունքով: Ընդդեմ 1.5 միլիոն հայություն սրի քաշվեց, գոհ զանց սովին ու հիվանդություններին: Դատարկվեց Արեւմտյան Հայաստանը իր տոհմիկ ժողովրդից, իսկ երեւելու արձանդոր սրից ու արքայախոս հայացքից մնացած պարզապես սփռվեցին աշխարհի աշխարհի սկիզբ տալով արդի հայոց Սփյուռքին:

Սեւ տառերով գրվեց 1915 թվականը հայոց պատմության սեւ խաւրճով դաշվելով մարդկության պատմության էջերում:

Հայկական կոտորածների մահաարարտ օրերին շատերը չէ, որ առաքինություն են քաջություն ունեցան ընդվզելու Աստծուն ու մարդկությանն ուղղված ոճիրի դեմ: Ծաւերը չէ, որ համարձակեցին բռնաբար արդար ծայր բարձրագույն ի պաշտպանություն իր հերկած ազատ ուստովոր իր կենդան եղեղնուց արյունը անապատներում սովաւարվող, հայ եւ քրիստոնյա լիւնելու համար խաչվող ժողովրդի:

Փոքրաթիվ ազնիվ այդ անհատներին ցասուն ու զգաստացնող կոչը որպէս մարդկության տրոփող խղճի աղաղակ, խեղդվեց Առաջին աշխարհամարտի որոտներում, անարձագանք կորով հզոր տերուրյունների մեծ քաղաքականության ոլորաններում: Մի՞թե մարդկությանը եւս մեկ աշխարհակործան պատերազմ էր պետք, ցեղասպանության մոր հնարք ու զոհ, որպէսզի սրբափվեր եւ քայլ առ քայլ անդադանար մարդու եւ ազգերի իրավունքների խնդիրներին:

Այսօր երրորդ հազարամյակի շննին, հայոց մեծ եղեռնից տասնամյակներ անց միայն, մի շարք պետություններ, նշանավոր պետական գործիչներ, գիտական շրջանակներ ու անհատներ ընդունում են քանդակաւ դարասկզբի հայոց ցեղասպանության իրողությունը, սակայն դեռեւս իր հաղթանակին է սպասում 1915 թ. եղեռնագործությունը դատապարտող համամարդկային արդարությունը: Արդարության այդ հաղթանակն անհրաժեշտ է ոչ միայն դժնակ ու մահաարարտ այդ օրերն արարած մեր ժողովրդին, որ տասնամյակներ շարունակ միայնակ կրելով իր վշտի մորմոքը, անարդարությունից խոցված ցավից կծկվել, սակայն վիրավոր հոգում, միեւնոյն է, չարին տեղ չի տվել: Հայոց ցեղասպանության դատապարտումը նույնքան անհրաժեշտ է բոլոր ժողովուրդներին, որ դարավոր երազ ունեն հաշտության, խաղաղության, փոխկապակցության, բարի կամեցողության: Արդարեւ, մեր ժողովուրդը, որ աշխարհսփյուռ է եւ թվով առավել Սփյուռքում, քան հայրենիքում, չհաղթեց չարից, այլ բարիով հաղթանակեց:

Սիրելի՛ հավատալոր գավակներ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Արդարության հաղթանակի հավատով այսօր համայն հայությունը մայր հայրենիքում եւ Սփյուռքում

քայլում է դեպի եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող բոլոր հուշակոթողներ խորին խոնարհումով հարգանքի տուր մատուցելու նահատակների տուրը հիշատակին: Հոգեհանգստյան աղերսով այսօր զանգերն են հնչում Սուրբ Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ բազմապատկվում աշխարհսփյուռ հայոց բոլոր եկեղեցիներում, բյուրավոր հայ հոգիներում, որ ամենը զոհերի հիշատակի ոգեկոչումով կամրջվել



ն օվկիանից օվկիան, մայրցամաքից մայրցամաք: Այսօր, կանգնած Միածնա՛յց Սուրբ Խորանի առջեւ, մեր հայացքը Ծիծեռնակաբերդի կոթողված բարձունքին, որպէս առաջին սպասավորն Առաքելական Սուրբ Եկեղեցու, մեր սրտաբուխ հայոց մէջ վերառաւրում առ Աստված միախառնած այս պահին Ղեր Զորի նահատակների ճշխարհներին խոնարհվող Մեր սիրեցյալ եղբոր Արամ Ա Սեօի Տանն Կիլիկի կաթողիկոսի եւ համայն հայոց խնկարայր աղոթքներին հա-

նուն նահատակ ու հարուցյալ մեր ժողովրդի:

Գոհություն եւ փառք Բարձրալին, Արարատի փնջերին բազմած ազնվատունկ ազգս հայոց գտավ կենսահաղորդ ալիքը վերընձնալովելու, կյանքին փարվելու եւ հիմնավորք ու հարուստ իր ժառանգության ողջ հասակով, որպէս փյունիկ նորահարձ հառնելու, հոգու ու մտքի մոր սլացքով արազընթաց 20-րդ դարի գիտությանն

ու արվեստին հավասարազոր խոսք ասելու: Փառք Երկնավորին, դարասկզբի բռնության տեղահանված, տարաքիլ մեր նախնայց սերունդներն այսօր արժանավոր եւ վստահություն վայելող քաղաքացիներն են իրենց հայրենի հյուրընկալած պետություններին, ուր վերականգնած ազգային իրենց կյանքը, քրիստոնեական-համամարդկային անմահ արժեքներին ու հայրենյաց արժաններին հավատարմորէ շարունակում են հաշտ աշխարհի ներկա-

յացնել աշխատասեր հայի ստեղծարար ոգին ու կարողությունը:

Երիցս փառք մեր հայրերի Ամենագոր Աստծուն, հայկյան ազատարար բազկի գորությանը, հարությանը հաղթական հավատով մահեր տոնակոխած մեր ժողովուրդը եղեռնակալի դարի ավարտին հայրենի սրբազան հողի վրա հաստատեց ազատ ու անկախ իր պետականությունը եւ վարդանանց ոգին բոցավառեց Արցախում արդար իր իրավունքի պաշտպանությանը:

Սիրելի՛ եւ հարազատ ժողովուրդ հայոց:

Ամենայն Հայոց Հայրապետիս մաղթանքն է, որ դեպի եղեռնի հուշարձանները առաջնորդող մեր ուղին վառ հայրենյաց, վառ հավատի ու խիստի նորոգման ճանապարհի լինի մշտապես զորացնելով մեզ միաբանելու ազգային մեր կյանքը, խաղաղ երկրի մերքո շեն ու բարձր դարձնելու անկախ մեր հայրենիքը, ուր խաղաղ եւ բարեկեցիկ «կորուստյալ» մեր երկրի՝ Նոր Արաբկիրով, Նոր Խարբերդով, Նոր Զեյթունով, Նոր Կիլիկիայով, Նոր Մալաթիայով: Արդ, մենք, որ զորու եղանք վերքն ու ցավը արարող ուժի վերափոխել, գործենք ու կերտենք հայրենադարձություն հայրենաշեն ոգով, որպէսզի երբեք չխուճանք սրբության տաճարները մեր հողում, որպէսզի երբեք եւ ոչ չինք այլեւս չդարձնել մեզ արտաքական ու զաղթական, եւ խաղաղասեր ու ստեղծագործ ժողովուրդ մեր մշտապես չարին բարիով հաղթողի կատաղությանը, հավատով ու հույսով մայի գալիքին:

Թող Բարձրալին Աստված ամենազօր իր սիրով հանգստություն եւ խաղաղություն պարգեւի լույս հոգիներին հայոց մեծ եղեռնի անմեղ զոհերին, որ բանավոր պատառազ եղան Իր Սուրբ Սեղանին:

«Յիշատակն արդարոց օրհնութեան եղիցի»: Ամեն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Սկիզբը էջ 1

Հայրապետական հորդոր ենք հղում Հայ Եկեղեցու նվիրատուությանն արողների գահակալներին, զինվորայն ողջ հոգեւոր դասին եւ Սփյուռքի մեր հայրենասեր գավակներին, որ հավատալոր գործերով աստար լինեն հայրենիքին, շարունակեն կիսել հայրենաբնակ իրենց քույրերի ու եղբայրների հոգսաշատ կյանքի ղեկավարությունը՝ իրենց արդար վաստակը շաղախելով նրանց քրտինքին ու մաքառմանը, հարազատ սրտի ջերմությունը փոխանցելով նրանց բեկյալ հոգիներին:

Սիրելիք՛ ք. մեկտեղենք մեր ջանքերը, նվիրումն ու սերը, որպէսզի հարությունար արշալույսի յուրաքանչյուր օրն ազգային մեր կյանքին եւ մեր հայրենիքին:

Հայրենիքին պարտք ենք ամենքս՝ մշտապես: Հայրենիքը

միշտ իրավացի է՝ ակիցք եւ ինքնություն պարգեւող իր գործերը: Իր գավակներին հիպոկրիտ խորհրդով: Հայրենիքի առջեւ զինաբար ենք բոլորք:

Արդարեւ, ամենքս պարտք ունենք մեր պատմությանն ու մեր գալիքի առջեւ, ինքներս մեր՝ մեր ապրած ղեկավարին, բայց հույսով ու հավատով լի տարիների առջեւ, այս հողը մեզ համար շահած ու պահած մեր սուրբ նահատակների ու նախնայաց առջեւ, այս յաղը մեզ շնորհած Բարձրալին Աստծո առջեւ: Խեղճահատկատրությունը, սիրելիք՛ ք, մենք վարդուց մերժել ենք մեզանից: Արդ, չորսերը սրբազան մեր ուխտը Արարատի ու Սուրբ Էջմիածնի հետ: Քաջաւորով ու պարտաստական ստանձնեցե՛ք մեր պատասխանատվությունը եւ ծառայության մեր բաժինը՝ հավատարմի մեր Փրկչին, որ հոժարակամ երկ-

նից երկիր խոնարհվեց ոչ «ծառայություն ընդունելու, այլ ծառայելու եւ իր անը տալու որպէս փրկություն աշխարհի» (Մատթ., 20:28):

Մեծաբարձ այս տոնին առաքյալների օրհնական, որ հարությանը գոտեպնդված՝ հին հանդերձի պէս թոթափեցին հուսահատությունը եւ դարձան անվիատ ու անվեներ քաղաքիչներ, մորոգներ հավատը մեր հոգիներում՝ իբրեւ Աստծո հավատարմի «նոր մոլոպկար», որպէսզի սուրբ սրտով եւ անկեղծափոր հավատով տոնախմբենք 1700-ամյա փառաշուր տարեդարձը առաքելախաւստար ու առաքելագործ Հայ Եկեղեցու:

Սիրելի՛ հայորդիք ի սփյուռս աշխարհի:

Եկե՛ք ոտքի կանգնե՛ք այս պահին բոլորս, որ ներկա ենք այստեղ սրբազան այս տաճա-

րում, բոլորս, որ աստվածային անմահ պատարագի արարողությանը մասնակից ու հաղորդ ենք հեռասփռումով, եւ մեր հոգու հայացքը ուղղած երկինք, միաժամաբար աղոթք բարձրացնենք առ Աստված՝ ասելով, Տե՛ր, հարության քանդակագործ խորհրդով գորացրու հայրենյաց սիրո եւ ազգային սիրաբանության մեր ուխտը, որպէսզի չվարանենք միմյանց համար միխիքարություն լինել եւ գտնանք իրար՝ առանց փնտրելու: Զո ողորմություններ ցնորք անվորով ու խաղաղ պահիր հայրենիքը մեր, Եկեղեցին ու ժողովուրդը հայոց: Պարգեւիր մեզ, Տե՛ր, ճշմարտության Զո Հոգին շնորհագարող՝ մեր գործերով Բարին ընտրելու, քանզի այնտեղ եւ Զո օրհնությանը, առատաբաշխ Զո պարգեւներով, Զո սիրով:

Ընդունիր, ո՛վ Տե՛ր, հավա-

տարմության նորոգ ուխտը ազգս հայոց, որ 2000 տարի Հարուցյալ Փրկչիդ ապավինած՝ ապրել է «Եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ» (Հոռն., 8:31) վստահությամբ: Անսպաքս պահիր մեր ընթացքը «սիրեցե՛ք զմիմեանս» աստվածային Զո պատվիրանի շափոններում, առաջնորդիր հայոց հոտիդ «Վիորք ամուն» տրտմության հովիտներինց առ արաւետները խաղաղության, երբանցյալայն եւ սիրո:

Արդ, սիրելիք՛ ք, հավատա՛մք, գորակցենք ու սիրենք միմյանց, քանզի «Մեր ոչ երբեք անկանի»: Ընդորք, սե՛ր եւ խաղաղութիւն յարուցեալ Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի ընդ ձեզ ամենեսեան: Ամեն:

Քրիստոս յարեալ ի մեռելոց: Փա՛րք Քրիստոսի անմահ գոր հարությանը:

ԱՇԽԱՐՀԻ ԵԿԵՂԵՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԻՏԻ ՆԵՇԻ «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՕՐ»

Գոհունակությամբ տեղեկացնում ենք մեր ժողովրդի սիրեցյալ գավակներին, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ Սեօի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության միացյալ աշխատանքի շնորհիվ եկեղեցիների համաշխարհային խորհուրդը որոշում է կայացրել իր անդա-

վակին քան 375 եկեղեցիներում ապրիլի 24-ին հաղորդող սիրակայն Նշել որպէս «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՕՐ»: Այդ օրը աշխարհի բոլոր ծագերում եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ բոլոր եկեղեցիներում հայ ժողովրդի նահատա-

կության ու հարության հատուկ հիշատակություն կկատարվի պատարագի ընթացքում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ ՄԵԾԻ ՏՆՆԵ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ

Իջի՛ր, անձրեւն, վարդաշուրի
պէս հոյրեալսն,
Թող ծաղիկներ բաժայլն
իրենց քեզ երկարեն,
Անպէրէն վար հոսի ծայլը ու
ծիաժան
Եւ բող պայքին գինով ճիշեր
քառարներէն:
Գիրենս, անձրեւն, Ապրիլի
հարս ծառերուն պէս

ԿՈՍԱՆ ԶԱՐՅԱՆ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄԸ

Գիրքն անարդյունք այն աղքատների պարտքերը, արքայազնները, որ կը բռնաբերեն մեզի դեմ, կը գգան արդյունք, որ այս ռուպիան մենք իբրև ազգ մտադիր եւ հոգեկան անանկություն մը կը ներկայացնենք, որ արվեստը եւ գրականությունը միակ միջոցն են, որով կրնանք արդարապես բարեկամ ազգային հանճարը եւ մեր գոյությունը պարզապես հաստատել:

Նայեցէ՛ք չէր շուրջը եւ ըսէ՛ք, ո՞րն է մեր ազգային իրերը, ո՞ր է սրտեղծագործ եւ կենդանի խոսքը, ի՞նչ կրնանք կը դավանենք, ի՞նչ կրնանք եւ ո՞ր կ'երթանք:

Ինչո՞վ խանգարված է երիտասարդությունը, ո՞ր Աստվածը կը պաշտէ ան:

Ինչպիսի՞նք արքայազն լեզուն եւ կրթնականը, նայեցէ՛ք չէր շուրջը եւ ըսէ՛ք:

Միջակություն, վախ, մտային մտրակություն, հոգեկան անգոյություն - ահա՛՛ Կոստանի պարկերը, որ մեզ կը շրջապատեն:

«Ասպարեզ»

Արդ՝ հարց է ծագում, մենք՝ հայերս, կանգնած երկու այն հսկա աշխարհների՝ մշակութային Արեւելքի եւ քաղաքակրթական Արեւմուտքի միջեւ՝ ի՞նչ կերպով պիտի կարողանանք իրագործել մեր պատմական ճակատագիրը:

Պիտի կառչե՞նք մեղմորեկ եվրոպական քաղաքակրթության, քեւ առաջին պլանի վրա կանգնած՝ արեւելյան մտքի մեր ճառագայթումի եւ մեր տեղեկագրության բաժինը հետ, պիտի հանդիսանանք մերո՞ւ մշակութային կենդանուն: Պիտի կրկնե՞նք մեր նախնիների սխալը, քեւ գիտակցորեն, հերոսաբար, պիտի կարողանանք՝ հսկայական մեզ շրջապատող անողորմ պայմաններին՝ դրսևորել մեր ազ-

գային եւր, ընդունել պատմությունը մեզ վիճակված խորհրդավոր, հակադրամաբանական ճակատագրական դերը:

Քաջությունը ունենանք խորհելու եւ նաեւ քաջությունը ունենանք համարձակելու:

Մեծ մշակույթները առաջ են եկել միշտ էլ հակառակ առարկայական, հակառակ տնտեսական եւ քաղաքական պայմաններին: Մշա-

Արեւմուտքը խենթացած գազանի նման քերտու է երկրագնդի մակերեսը՝ մոր գանձեր գտնելու համար եւ անգիտակցաբար փորում է իր գերեզմանը:

կույթը, երեւում էր, հոգեկան արկածախնդրություն է, վսեմ մի խնդրություն, որով տիեզերքը գալիս գտնում է իր իմաստը: Մշակույթը պահանջում է մեծ ճիգ, հավատը եւ գոհաբերություն՝ առաքինություններ, որով հայ ժողովուրդը լիովին օժտված է: Այլպէս կարելի չէ հասկանալ մեր ամբողջ պատմությունը, մեր դարավոր մարտիրոսությունը, մեր բաժնի մարտունակ համաշխարհային իմաստը:

Երբ մենք՝ հայերս, կուրծքն ենք քարկվենք ներկա քաղաքական պայմաններին, մեզ վիճակված է ռուսական ապագա հսկա տնտեսական կազմակերպության մեջ չնչին արտադրողի դիմագրույր եւ աղքատի վիճակ:

Երբ այս օրվան հայ համայնավարները՝ չնայած ժամանակավոր եւ երեւութական զիջումներին աշխատում են ազգային եւ կրթական գոյատևումը միանգամայն բանդել, հայ գաղթականները ցրել Ռուսաստանում, եւ երկիրը վերածել տնտեսական միավորի, մրանք

գործում են տրամաբանորեն եւ հավատարիմ իրենց իդեալին: Նրանք ուրանում են մշակութային արժեքները եւ իբրեւ բուրժուական դրամատիկական մտքի ծայրահեղ ներկայացուցիչներ, ձգտում են բոլոր տարրերը ծուլել որոշ արդյունաբերական նպատակների համար: Եւ պետք չէ գործնալ, երբ հայ վաճառականները եւ արտասահմանյան հարուստները իրենց ծարավ աչքերը հառնում են համալրանքով դեպի համայնավարությունը:

Գալը ճանաչում է իր ճագին: Այլով տան փլատակների վրա նրանք տեսնում են ապագա կարելիություններ: Նույն ճիգի եւ նույն մտայնության մարդիկ՝ նրանք գիտեն, որ իրենց կոնկրետ ժամանակավոր է, բայց իմաստը բոլոր կանգնել եւ ձեռք ձեռք տված նրանք միասին կաշխատեն:

Նրանց աշխարհայացքը նույն տարրերից է կազմված, նյութապաշտ են, ուրանում են վերացական, հոգեկանը, ուրանում են մշակույթը:

Սակայն, բավական է քեթե հայացք նետել մեր քաղաքի վրա, ընթերցելու համար, որ մեր երկիրը մեծ արդյունաբերական ապագա չունի: Հայոց աշխարհը, ինչպէս Հինալայի ստորոտը եւ Հռոմեական բլուրները, գերազանցապէս կրոնական է: Աշխարհը խաչածառն տնտեսական ճանապարհներից դուրս՝ դրանք հանդիսանում են իբրեւ խորհրդավոր կենտը, ուր երկրակողմի վրա կանգնել է առնում եւ երկար չկում:

Մեր հոգեկան սնունդը Արարածից է գալիս՝ չոր ու ցամաք, տնտեսապէս անպետք մի լեռ:

Եւ իզուր չէ, որ հայ ժողովուրդը պատմության մեջ չտեսնված չարաբան է կրել, միլիոնավոր գոհեր է տվել, ծով արյուն է բաժնել՝ այդ

խոր կորցնելու համար:

Երբ մենք ուրանք մեր անցյալը, դավաճաններ մեզ, եւ հետեւելով իրապաշտ առարկաների դավաճաններին, ընդունենք քաղաքակրթական շուկայում մեզ վիճակված փորձի խանութային դերը, մենք կստորագրենք մեր մահը: Հայաստանը կլինի, ինչպէս այսօր, Մոսկվայի առջեւ դողացող մշտնջենական մուրաքիկ, որը պետք ունի դրամագլխի, որպեսզի աշխատի, պետք ունի շուկային, որպեսզի ծախսի, պետք ունի դրական գիտության, որպեսզի մտածի:

Եւ ուրանում են ժխմելուգլխի եւ ստամոքսային այդ Հայաստանը:

Մեր երկիրը այն բախտավոր ծայրերիցն է, որոնք չեն կերպարում, այլ կերպարվում են: Արդեն եւ Արեւմուտք, այդպէս էր մասամբ Հռոմը եւ այդպէս է Արեւելքի մեծ մասը: Ռատի, հայ լինելը պահանջ

Հայոց աշխարհը, ինչպէս Հինալայի ստորոտը եւ Հռոմեական բլուրները, գերազանցապէս կրոնական է:

Գում է մեծ ճիգ, հոգեկան կենդանացում, գոհաբերության ոգի, խոր հավատը եւ առաքելական մոլեռնություն:

Արեւմուտքը խենթացած գազանի նման, քերտու է երկրագնդի մակերեսը մոր գանձեր գտնելու համար, եւ անգիտակցաբար փորում է իր գերեզմանը: 18-րդ դարից նա ծառանգել է նյութապաշտ իմացականության դուրսի գերը, որով կարողանում է հաղթել բնության տարրական ուժերին: Նա ուրանում է հոգեկան արժեքների ավանդական շաղկապում, մարդը իրի է վերածում, ազգությունը՝ տնտեսական

ազգակի ու խորհուրդը՝ նախապաշարում: Ու իր ծոցից դուրս եկած լավագույն խորհուրդներ՝ Զպենգլեր, Կայզերինգ եւ շատ ուրիշներ, վկայում են նրա մոտավոր մահը:

Բուլշեւիզմը ծնված է ոչ քեւ, ինչպէս շատերը կարծում են, ինչպէս առաջ կարծում էի ես ես, վերջին հարվածը տալու համար մեղմորեկ այս աշխարհին, այլ ընդհակառակը, բոժոժային ուժով շարունակելու համար նրա հոգեկարգը:

Նոր մշակութային շրջանը սկսվում է Արեւելքում:

Չմոռանա՛ք, որ քրիստոնեությունը առաջ եկավ Հրեաստանի ամենահետամնաց եւ աղքատիկ աստվածաշնչական կայսրության իզոթագույն դարում:

Հայոց աշխարհը, արյունն է մահի ողորդական այդ երկիրը եղի է բոլոր կարելիություններով: Արարատի աստվածաշնչական ոգին պատրաստ է ճառագայթելու նրա բարեկամ ստեղծագործական բաժինը, հսկա սերմի նման պարկեր վրա է, ու դարձ մոտենում է, երբ վերջապէս հայ ժողովուրդը պիտի գտնի ինքն իրեն: Լինի այն, ինչ որ է: Կատարի իր դերը, ասե իր խոսքը:

Մեզ վիճակված է ապրել բարձր քաղաքական վրա: Մեր դասերը եւ մեր լեզուն մազցում են դեպի լեռը՝ վա՛՛յ մեզ, երբ վար իջնենք, կ'ընկնենք՝ արդի քաղաքակրթության ծիսներդից տակ, մերենայի մաս կը դառնանք կամ խանութալան:

Հայաստանում դեռ հովիվներ կան: Նրանք ճանաչում են աստղերը եւ քաջ գիտեն բոլոր ճանապարհները:

Մշակույթը հովիվների գիտություն է:

«Ծառն իր արմարն է փնդրում»
(1910-1922) շարքից

ԶԱՐԷՆ ՍՈՒԹԱՅՅԱՆ

ԵՂԵՌՆԻ ՅՈՒՇԵՐՉԵՆԸ

(Հարված)

...Լեզուքին ամենէն անեղը, որ բմբոստուծիւնը կը թափէ Հրեշտային թուրքին եւ անոր կաթնեղբայր քիւրտին վրայ: Դրիւկն է կարծիր ծարաւին, որ կ'ողէ արդարութիւնով յագնայ:

Ծիծեռնակներ այլեւ չեն լեռա-Հարեւ Ծիծեռնակաբերդի սգավայրին վրայ, որ չխտովեն լաւիտեանական բունը Տառապանքին:

Յուշարձան, Կայէնի աչքը թշնամաճալած, գերեզմանն են Համարաբաժ գերեզմաննուցին, կոթողը՝ վայրագութեան փոթորիկին, պիտի մնաս արեան սրբալայրը Ժողովուրդի մի կէսին, որ քաւեց իր մեղքը Հայ ծնած ըլլալու յանցանքին:

Տասներկու քարեր, տասներկու բունցները մեր նաճանգներուն, Եղեռնի յուշարձանն են կերտեր: Անոնց վրայ վրէժի բոցովը գործած բառերն անգիր պետք է կարդալ բարձրագոյն, որ լսէ արարաշխարհ, թէ դա՛հինք Ժողովուրդի մի կէսին, գարշանքն է մարդկային կեղտին:

Տասներկու քարեր, սգակիր մարերուն նման իրենց գլուխներն իրարու մօտեցուցած կը մրմնջեն անձեք երբեք չյտնած, երբեք չտեսնուած ջարդին: Յուզիչ մեղեդիներ, որ կը լսուին անոնց դիւնդէն, Հոգեցոյցն Հոգիւններն ընդմէջէն, Հոգեցոյցն Հոգեցոյցն են Հոգեկալքերն, աղէխարշ ճիչերը մաճուան, սրտաճմիկ կանչերը երեւաններուն մեղեդիներու վերածուած:

Յուշարձան, չարարանքի խորան, ամբողջն են մէկուկէն միլիոն նաճանգներ:



Սուրբաթյան. «Ջարդից փրկվածները»
1939 թ.

տակներու վրէժին, կը լույսն Համարաբաժնի միջին կանչը գալիք

Ինչ հասակներ փայլալեզին գիշեր մ'անհուն...

Ահ, պոյր մը ջուր հասցուր անոնց, այդ լեռնաբեզ Անապարի փայլէկ պայպակ ուկորներուն...

Հոսէ՛, անձրեւ, սիրերդի պէս կարասնեկան.

Սրտերն ահա կ'ընդիստանան լարերդդ հեղեղ եւ բերկրութեանք եւ հեղիւսնքով կը լիանան ճերմակ փուններ՝ փարափիղ փակ խաղաղաւեր:

Հիմա, անձրեւ, ծեր պանդուխտներ կան ամէն տեղ, Որ յուշերու ցուրդ կրակին դէմ կը մրսին: Անոնց խարխուլ հիւղակներուն վրայ քիթեղ Թափէ երազն իրենց հօրի ուրնաշայկին...

Եկ'որ, անձրեւ, աղօթքի պէս բաղմանական.

Ես կ'ուզեմ լալ անուկի փաթ աշուղներով

Այնքան ուրախ փոսին համար սա յորդ գարնան եւ կենանքերուն որ ինկան մերկ եւ անգորով...



ԽՈՍՔ ՄԻՐՈՒ ԵՎ ԵՐԱԽՏԻՔԻ

60-ական թվականներին հայ կերպարվեստում ասպարեզ իջավ մի սերունդ, որն ասես մարտահրավեր նետեց համայն խորհրդային՝ կադապրված, կեղծ գաղափարախոսությանն ու գեղարվես-



տական ըմբռնումներին՝ իր արժաքած քեմաների, խոհափիլիսոփայական ենթատեքստերի, կոմպոզիցիոն խնդիրների յուրօրինակ ու անսպասելի լուծումներով: Դառավոր մշակույթ ու գեղարվեստա-

րոյություն ունեցող մկարդի դիմանալարը բաց ծանոթ է մեզ գենուս ուսամունձական տարիներին ստեղծած Հ. Թումանյանի «Ամուշ» պոեմի նկարագրավորմանը. նրան համընդհանուր ճանաչում բերած «Աբու առադիկներ»
«Եվ հաց, ես սեր, ես երգացրեմ», «Հացը լեռներում», «Հայաստան» կտավներից։ Պ.
Սեւակի «Ամբիջի զանգվատան» նկարագրող տեքստն է մերը
նկարչի ոչ միայն պոր-
ֆետիստ ձևադրերում-
ների հավաստումը
եղան, այլ քնկալվածի
ես հենց իր՝ նկարչի
սուբյեկտիվ աշխարհի
հոգեբանական վի-
ժակների պատկերա-
յին դրսևորումը։
Նրանցում խիստ շո-
շափելի էր այն նպա-
տակի ու գաղափարի
կարեւորությունը, որ
գրական հեղինակից
ոչ պակաս զգուշ էր
խճիր՝ նկարչից։ Խան-
ջյանի բոլոր նկարա-
գրություններում առիա-
սարակ ապշեցնում են
գրական երկի խոր իմացությունը,
ժողովրդին ու ժամանակաշրջա-
նին բնորոշ առանձնահատկու-
թյունների դրսևորմամբ, կերպա-
ների հոգեբանական արտահայտ-
մամբ, բանաստեղծական պատ-



յան ինքնատիպ մտածողությունը
ունեցող հայ ժողովրդի կերպար-
վեստում, շնորհիվ Երեսնյի գե-
ղավարտական ինստիտուտի հե-
տադարձության՝ ազգային
սվառնությունով կրթություն
տալուց մանրիկ, քաղցիկ մի նոր
չ, մի փայլուն համալսարնություն,
որի պայծառ աստղերից մեկն էլ
Էդուարդ Խանգուկյանն է:

Ամբուշա, զովար է մի հողվածի
 շրջանակներու համապարփակ
 տեսք ածի մկարի անցած ողոր,
 դրոճմաների ու պարտումների
 զարմանալի հարուստ ստեղծա-
 յությունակ ժառանգությամբ, նրա
 շարադրանքական պարտի ու
 յրժոններու յայն, մարդկային
 հասկանալիների ու դրսևորումնե-
 ի մասին: Նրա ողջ ստեղծագոր-
 ճական կյանքը եղել է անողոր դո-
 ճումների ու պարտումների մի քու-
 շա, ուր օրըստօրե բրվել, ձև ու
 լեքրայաբան են ստացել ոչ միայն
 մկարի գեղանկարչական ու գրա-
 վիճիկական պզորներները, այլև
 նախասիրած բեմաներն ու մո-
 տիվները, դրանցում բարձրված
 զգալիարական ու փիլիսոփայա-
 կան հարցադրանքները: Ստեղծա-
 գործական 55 տարիների կենսա-

լերներին, հեղինակի աշխարհա-
այցքին ու գրելաոճին համահունչ
գրաֆիկական ձեւերի լուծմամբ:

Նրա արվեստում
վկայա ոչ մի ավերորդ,
անհայտապահ գիծ:
Բիծը, գծման արք,
ուսաստվերը, բի-
ծը, մի խոսքով՝ ողջ
արտահայտչաժան-
րոցները ուղղված
են մեկ նպատակի՝
գերխնդրի բացա-
ռալովմանը:

խաճցյաճի հա-
մար արվեստը չի
զոհվել տոսկ կերպա-
նկարման խնդիրներ
նրանում: Միջոց: Նա
արամբ դիմում էր
իր մտախնայուն-
ները, ժամանակի
մեջ ու ժամանակ-
ային ասկիքի տեղ
հասցնելու, գոյլին,
լծի, պատկերի մի-
ջոցով իր քաղա-
քացիական դիրք-
որոշումը, աշխարհ-
գեղարվեստը և իր
իր ժողովրդին:

Ապրիլի 21-ին հայ ժողովուրդը վերջին հրաժեշտը տվեց իր անվանին զավթաներից մեկին՝ ժողովրդական նկարիչ, ՀՀ ՀԱՄԻ խելական անդամ, պերական մրցանակի դափնեկիր, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Փերագույնի հոգեգիր խորհրդի 40 րարով անդամ Գրիգոր Սևակյանի խանգչականին, որի 74-ամյակը պիտի լրանա ար րարի՝ մոյնմբերի 29-ին:

պատկանող այս հողակտորի վրա կանգին ճշմարիտ առժեռն ու իմաստով վերաբարձություն համար։ Նրա ուշադրությունն ու հետաքրքրություններին չըզանակներում մշտապես կորո խորին հարեանանք կհանդիպի կտամն ու բնակարար, բնիմանկարն ու ճատությունըտը։ Զուրաբանչությունն ասելիք ուներ, լուծեցիք խնդիրներ, առաջապիներըկորոդականից զանգագանելու մեծ հմտություն։ Նրա կերպարներն ու պատկերները կտակի մասկերեսի վրա ստեղծում են հուզումներնի էֆեկտներից գեղեթ, հավաքաբարշտված, զուտա ու չափավոր զգացումներնիներշարժություն, էսլիկականի ու քնարակականի միաստեղ ու միասնական ամբողջություն։ Խուտակեկով կեղծ տոմական մթնոլորտի պատրասե կտեղծելուն մա մշտապես ստեղծել ու թղթին էր հանձնում իրապանություն պատկերող շեշտելով իկնմականումը աշխուղակամությունը, որը տրվալ դեպումն առաջապիներ էր համարում իր քնտառ թեմանում։ Այդպիսի թեմաներից էին պատմություն ասյն այն դրվագները, որոնք քախտառող դեր ունեցան մեր ժողովրդի համար։

Պատմական բեման հայկերապարկեստում, ասես, մոնոստրիպյան մատմուճակ ժամը էր, իսկ խաճճյանի համար այն դարձավ նախաձեռնած բնագավառ։ Պատմությանն աճորադառնալիս կարպական ձիթը ու օժտվածությունը դեռես քավարար էին։ Բազմաֆիդոր, մոմոմենտալ գործերի ստեղծումը, աշխատատեղ ու ղեկավարին լինելուց զատ, պահանջում է գիտելիքների ու իմացությունների իսկալական պայառ, ժամանակաշրջանի քաղաքական, քարտիառգեքանական մթնոլորտի իմացություն, մարդկային փոխհարաբերությունների, լինելուի, կախ-կարասու, գործաշուքային առարկաների, գգեսունենի, արդ ու զարդի խորագգին ուսուցող մոդուլություն։ Կատմական յուրօր նախկին մեկնաբանելու, ժամանակի պահանջների հետ անհարաբերելիստություն մեջ դնելու ու յայտ եկիստության իմաստն




ապագայի մեջ հնչեցնելու կամք ու հիմնություն: «Հայոց այբուբենը»-ն «Վարդանանք» գործերնեղի համալսարանականաբար դրանց կարդալիսի տեղեման գալա- փարն ամենեիկ պատահական չէր: Ամենայն Հայոց երջանակի- շաւտակ կարդիլիս Վազգեն Առաջինն ու տաւմանայակն շա- րունակ Մայր Եկեղեցին նոն սեր- տորեն կապկած՝ Գերագոյն հո- լօրն խորիքի անգամ Գրիգոր Լեւոնյանից չէին կարող չիւզել:

մեր ժողովրդի կենսագործության այդ երկու խիստ բախտորոշ դրվագները։ Հլչեղքը, երբ խորհրդային Միության վերջին սահմանադրությունից միտումնավոր կերպով հանվեց ազգային համրապետությունների պետական լեզվի հարցը, Խաճաջյանն առաջիններից էր, որ ընդվզեց այդ երևույթի դեմ՝ համարելով այն մեծագույն ուսմծություն մեր ազգային ինքնության, մեր ճշմարիտ լինելության դեմ։ Նրա անցնելու, շիտակ կամքի դրսևորումներին մեկ անգամ չէ, որ ականատեսն ու անցնող եղանքը։

A black and white portrait photograph of a man, likely Khachaturyants, looking slightly to the right. He has dark hair and is wearing a light-colored shirt. The photo is positioned at the bottom right of the page, partially overlapping the text.

Բնավ պատահական չէր, երբ 1981 թվականին հանրության դատին ներկայացվեցին վերոհիշյալ գործերի կարտոնները, Հայաստանի մկաթի տան ցուցարարի վերածվել էր կատարյալ տոնահանդեսի: Առավոտից մինչև ուշ երեկո համբարատոյթան բոլոր ծայրերից մարդկային հոսքը գալիս ու անցնում էր ցուցարահով: Տարիներին հեծվից այդ երեսույթը հիշեցնում է 1988-ի Ավստրոլյան հրապարակը: Երկուսում էլ պտորկուն էր ազգային ոգու ճիւղ, ազգային համերաշխության ու միասնականության շուրջն զգացվում էր ճշիտ այնպես, ինչպես 406 թվականին, երբ հաստատեղույթս քերադարպիսպներն պես ոտքի ելան Հայոց Վասնշապուի արքան, կա-



բողիկոս Սահակ Պարբենով Մե-
տուր Մաշադոյը, 451-ին՝ Ավարդա-
նոքը, որոնք Ավարդայի դաշտում,
որպես հրածին ժայռեր, փորրիկ-
վելով ժայռեցեղին վանս հավաքե-
ն են վանս հայրենյալը: Խանջյանա-
կան կատուններում շուրջ 16 դար
առաջ կառավարվածը մեկնաբան-
ված ու ներկայացված է որպես
շարունակությունը սուրբ Հիդդոյը
Լուսավորչի ու Տոգաա Մեծի սկ-
սած գործի ու որը դարերի մեջ աճ-
վեցորեն շարունակվում են ու պի-
տի հարաառնի աճմն մի ճշմարիտ
երգվյալ հայի միջով, ով ապրում է,
արարում ու աահաաակվում է,
վաաա հայրենիքի ու հավաաի,
վաաա մեր պաաաաաաա ու մշա-
կույթի կերաաաա ու վերակերաա-
աա:

«Հայոց այբուբենն» ու «Վարդանանքը» շարունակվում են...

Մեր մայրաքաղաքի կենտրոնը Երևանում բաղամասին կապող «Կասկադի» սրահներից մեկում շուրջ մեկ ու կես տասնամյակ, 7 հետք բարձրությամբ վրա կանգնած, մեծ-մեծակ, առանց օգնության ու օգնականի՝ նկարիչն իրականացնում էր իր եռապատկերը՝ որմնակարը՝ «Հայոց պարտիզներ», «Վարդանանք» և «Վերածնունդի»։ Նախապես կամ էր, որ ինչպիսի վերջերին կամ հունիսի վաղերին վերջին որմնակարի ավարտից հետո, մեծ շուրջով տեղի



սյսիտի ունենալու արտաքին բացումը: Ցավով, «բացումը» շտապեց՝ անավարտ թողնելով նկարիչ, ինչպես ինքն էր առում, վերջին տարիների միակ նկատատակն ու գործը: Սակայն այն, ինչ հասցրեց թողնել Գրիգոր Խանջջան մարդը, նկարիչը, քաղաքացին ու հայը, այնքան է, որ կարող ենք համարձակորեն ասել՝ 16 դար առաջ կատարված շարունակված է, շարունակվում է Խանճաճան մեծ անհայտի միջով:

Կարոհի Կոստանբուլցյան



ՄՐԱՎԱՅՐԵՐԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

«Մ. ք. ա. մոտ 1800 թվականին, Արրահամ անունով մարդը լքեց իր տունը, որպեսզի երկար ճամփա անցնի, գնա դեպի Քանան՝ Ավետյաց երկիր, որը հայտնի է Իսրայել անունով...»

Այս տողերով է սկսվում հին ճեմարանի դահլիճում բացված «Ալունքներ» լուսանկարչական ցուցահանդեսի ուղեցույցը:

30 մեծադիր լուսանկարներ, որոնք պատմում են Իսրայելի քրիստոնեական հրեական և մուսուլմանական քրդաբնակների մասին, ստեղծել են մի գեղեցիկ համադրություն, որը պատկերացում է տալիս աշխարհի երեք մեծ կրոնների օրոքան այդ երկրի և սրբության սրբոց քաղաք Երուսաղեմի մասին:

Ցուցահանդեսը կազմակերպվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին թանգարանների բաժնի և Վրաստանում Իսրայելի դեսպանատան համատեղ ջանքերով, ինչպես նաև Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր իշխանություններին:

Ս. Հարությունյան տոնին նախորդող Ավագ Երեքշաբթիի երեկոյան՝ ապրիլի 18-ին, տեղի ունեցավ ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությունը: Հայաստանում հավանաբար առաջին անգամ Դուստանի Դաշնության, Ռուսիայի, Հնդկաստանի և այլ երկրների դեսպանների և դեսպանատան աշխատողների, արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի ղեկավարներ, Մայր

Աթոռի հոգեւորականների և բազմաթիվ հյուրերի ներկայությամբ տարածաշրջանում Խորաշինի դեսպան

այն. Ենոյի Էյրամը, իր շնորհակալական խոսքն ուղղելով Վեհափառ Հայրապետին՝ ցուցահանդեսը Մայր Աթոռում կազմակերպելու հնարավորություն ընձեռելու համար, մշտեց իր մեծ կարեւորությունը, որ ունի տարբեր կրոններ դավանող մարդկանց ու ժողովուրդների խաղաղ գոյակցությունն ու փոխըմբռնումը:

Պատասխանելով Վեհափառ Հայրապետի բարեմաղթանքներ և օրհնություններ հղեց հյուրերին՝ բարձր գնահատելով կազմակերպիչների աշխատանքը: Խորհրդանշական է, որ Հիսուս Քրիստոսի 2000-ամյակին նվիրված այս ցուցահանդեսը բացվեց և գործելու է Ս. Հարությունյան տոնին հարող ժամանակահատվածում:

Ներկայացված սրբավայրերի նկարները զարգալիք են տալիս այն հոգածության մասին, որ Իսրայելի կառավարությունը վարելով է սրբավայրերի նկատմամբ՝ անկախ դավանանքից և ազգային պատկանելությունից:

Երկու շաբաթ տևող ցուցահանդեսը կոչված է Էջմիածին քաղաքի և Ս. Հարությունյան տոնի առիթով Մայր Աթոռ ժամանող այցելուները:

Հ. Թադևոսյան

Սպորտի չեզ հենք ներկայացնում ցուցահանդեսի ուղեցույցի առաջաբանը

ԱՎՈՒՆՔՆԵՐ

Մ. ք. ա. մոտ 1800 թվականին Արրահամ անունով մարդը լքեց իր տունը, որպեսզի երկար ճամփա անցնի, գնա դեպի Քանան՝ Ավետյաց երկիր, որը հայտնի է Իսրայել անունով...



րայել անունով: Նա դա արեց Ասործու հրամանով: Այսպես ծնվեց միասրվածությունը (մոնոթեիզմ):

Մի քանի հարյուրամյակ անց Մովսեսը, սրբանախով քաղաքի պարիսպները, բերեց իսրայելցիներին դեպի այն երկիրը, որ խոստացված էր նրանց Ասործու կողմից:

Ավելի քան հազար տարի անցավ, մինչև որ Քրիստոսը (Քրիստոսը) քաղաքում ծնվեց Հիսուս Քրիստոսը: Զարգանալով Փայիկիայում և Երուսաղեմում՝ Նա աշխարհին տվեց քրիստոնեությունը: Հեղուկ կալվածքի հերթը, երբ 7-րդ դարում, երբ Մուսուլման մարգարեն Մահմադին հրավիրեց Երուսաղեմը լուսանկարչական իր առաջին հայրնությունը, այդ կրոնը հայտնի դարձավ աշխարհին:

ցիկն Ս. Հեղինեի՝ քրիստոնեական առաջին կայսր Կոստանդին Մեծի մայրը:

Նրա այցելությունն արդյունք էր Մայր Հարությունյան թանգարանի կառուցման Կոստանդին Մեծի կողմից այն վայրում, որը Հեղինեի ծննդավայրն էր Գողգոթա՝ Հիսուսի կալվածքում:

Մահմադականների մոտ Երուսաղեմը (Ալ-Կուդ) Սուրբ քաղաք էր երկրպագության վայր դարձավ 7-րդ դարում, երբ Տամարի առաքիլը «Մեծ սրբաբնակիչ» Խարան ալ-Հարաբի» կառուցվեց Մեծի մզկիթը (Գմբե ժայռի վրա):

Այսօրից, համաշխարհային մահմեդական ավանդության, Մուսուլման մարգարեն երկիրը բարձրացավ:

«ՀԻՇԻՐ, ԵՏԵՎՈՒՄ ՀԱՅՐԵՆԻՔՆԵՐ Ե...»

Ամսաթիվ գրացմունքով է լցվում հոգի, ու ողջ էությունը պարունակում է Հայոց լեռների պես վեհ ու անվարան հայատնություն, անհողողող բաշտություն, երբ հայրենի ջերմ օջախից հեռու, օր ու գիշեր խրամատում հերթապահող զինվորներով շրջապատված՝ կանգնած են մարտական հենակետում, որտեղից սկսվում է հայրենի սուրբ հողը, որի ամեն մի քառակուսի շաղախված է մի-մի հասնախալ հայ մարտիկի հայրենամեղեր ու լուսաշող արյամբ:

... Փորրիկ մի բլուր, բլուր, որի վրա տեղակայված է Հայոց բանակի մարտական հենակետերից մեկը, բլուր, որով մասամբ պայմանավորված է Հայոց երկրի անխառն կապույտը, Հայոց լեռնաշխարհի, խոր ձորերի ու կիրճերի անխառն անդորրն ու խաղաղությունը:

Փորրիկ մի բլուր, որի մի կողմում հայրենի տունն է՝ նախնայաց սրբազան շիրմներով ու երկնապաղ զանգերով, իսկ մյուս կողմում՝ բշտածին, որ ամեն թույն պատրաստ է հագեցնել իր ծաղիկը հայի անմեղ արյամբ:

Փորրիկ մի բլուր, որից սկիզբ առավ Եռաբլուրը, ուր մեզում են հարություն հույսով լցված, իրենց գործի սրբություն, ճշմարտության ու կարեւորության գիտակցումով, համու հայրենայաց իրենց մատաղ կյանքը կարծաբար, հավերժ խնկելի ու անմահ հավատո մարտիկները:

Փորրիկ մի բլուր, որի համար քափված մեր բաշտի պատմամարտիկների մեռնաբույր արյուն շիրմերով գրվեցին Հայոց պատմության լուսարձակ ու պանծալի էջերը: Փորրիկ մի բլուր, որտեղ ականա մտածում են այս ամենի մասին, որտեղ ականա իշուն են Վարդան Մանկունյանին և մյուս քաջարարական հերոսներին ու դառնում կարծես մի առյուծ, պատրաստ մինչև մահ մարտնչելու, մարտնչելու ու հաճում ազգի ու կրոնի կյանքը նվիրաբերելու:

Փորրիկ մի բլուր, որտեղ այս խոհերով ողորկված՝ մայրն են շուրջը ու հանկարծ հայացող կանգն է առնում մոտիկ սարալանջերից մեկի վրա, ուր զինվորի ձեռքով, քարե մեծ տատերով գրված է մի կոչ:

«ՀԻՇԻՐ, ԵՏԵՎՈՒՄ ՀԱՅՐԵՆԻՔՆԵՐ Ե...»:

Սիրելի՛ զինվոր, այսօր դու՛ ես մեր մահատանների նվիրական գործի շարունակողը, դու՛ ես մեր սուրբ հայրենիքի, շենքերի և վանքերի, խաչքարերի ու շիրմների պաշտպանը, քեզնով է պայմանավորված մեր հայրենի օջախների խաղաղությունը, մեր շարք-մայրերի հոգու անդորրը և ամենի հայ մանուկների ուրախ ու գլխալի ծիծաղը:

Պատվով, սիրով ու նվիրվածությամբ շարունակիր այն գործը, որը սկսեցին մեր հայրերն ու եղբայրները, հիշիր՛ նրանց և եղի արժանի հաջորդ, արժանի գավառ Հայոց բաշտի:

Թող Աստված օրհնի ու գորացնի քո հավատը, հայ՛ զինվոր, թող Քրիստոսի հրաշափառ հարության ավետիսը աներեր պահի քո հույսը, ու թող մեր հայրերի աղոթքն ու սուրբ խաչքարերի գործությունը պահպանեն լինեն քեզ: ԱՄԵՆ:

Մանուկ սրբ, Ղալաշյան Ազգային բանակի N գործառնի հոգևոր խորհրդական

ՄՐԱՎԱՅՐԵՐԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Այս տարվա ապրիլի 16-ին՝ Մաղկազարդի օրը, փորրիկ դուտերս հետ գնացին՝... եկեղեցի՝ պատարագին մասնակցելու: Երեւի ինքները էլ տեղյակ եք, թե տոնական օրերին ինչ է կատարվում մեր եկեղեցիներում: Այս անգամ նույնպես...

Ունեմո՛ ծաղկերի հարվածներից պաշտպանվելով՝ մտաբեր եկեղեցի՝ ժամերգության: Կարծում են՝ հասկացաք, որ ժամերգության, եւ առավել եւս պատարագի եւ ոչ մի բան անգամ չէին կարող լինել: Գողգոթայի, իրար ուղղված վիրավորանքներ, իրենք «հավատացյալների»՝ ճյուղերն օրհնել տալու միակ միջոցն էին: Դեռ ավելին, անսահման ամբողջ հասավ այն բանին, որ քահանան ու սարկավագներն սկսեցին գոչալ ու իրել մարդկանց, որ հեռացնեն իրենցից և կարողանան շարունակել արարողությունը: Պատարագին պատկերվել ավելի մնայլ էր: Բաց դռներից ներս մտնող, անցուղաբաժնող մարդիկ իրենց համար ճանապարհի երեքուկտը՝ տարբերվել թե՛ մեծահասակներին եւ թե՛ փոքրիկին: Հոգնած տարեց կանայք ուղղակի կոչվում էին իրար հետ՝ ճառարանին տեղ գրադեցնելու համար: Հավատացյալները կառչել էին պոռնիկի պատերից՝ որպես հենարան, որ չընկնեն ու կարողանան արդեն: Ի՞նչ արդեն հնարավորություն մասին է խոսքը, երբ նրանց պարտադրաբար կարծում էին արդարեւ, որ կարողանան ներս ու դուրս անել մո՛տ վառել... ու ետ:

Տեսարանը գնալով ավելի էր զարգանում: Հավատացե՛ք, որ այս ամենից բարկացած՝ սկսեց լաց լինել: Եւ հենց այդ պահին մի տղամարդ, բարձր գոտայով ժողովրդին առում էր. «Ժողովուրդ, օպերայի համերգը ինչ ժամից կսկսվի»: Այլնա անգոր էի դիմանալ, դիվական մի պոռնիկում ու շարունակ, բոլորի մեծ գոտայով՝ վրա տղեկն այդ մարդուն: Իսկ հետո իրենց ինքնից, որ չկարողացա զայել պոռնիկում, ընկա ծամը հոգեկան մոճավանդի մեջ: Այնքան առաջ ապիտակեց, գլուխս պտտվեց, շունչս սկսեց կտրվել: Երեկային ձեռքից բռնած՝ մի կերպ ինձ դուրս գցեցի ու մտնեցի մոտակա քարին, որ չընկնեմ:

Երե կարող եք, բացատրե՛ք՝ պատարագի իմաստը որն է, երբ ոչ մի բան չլիներ լսես ու եկեղեցում մեղերից ազատվելու փոխարեն՝ նորերը գործելով՝ դուրս ելնես:

Հարգարժան հոգեւոր հայրեր, իսկ հավատացյալները ո՞ր փայլե՛ք՝ խաղաղության մեջ աղոթք անելու: Գուցե աղանդավորների մոտ, այդպիսով կամ ա՛յլ շինություններում:

Ես նոր են դարձի եկել: Այս պատարագն իմ առաջին ապաշխարության առաջին պատարագն էր, իսկ փորրիկին համար՝ ամենաառաջինը: Հ. Գ.

Բաց դռներից քանի էր փչում, ու հիվանդանալը դուրսին քան էր: Գուցե պետք է, ինչպես նախկինում, փակ դռների երեսում պատարագ մարտից՝ այս և էլի մի շաբաթ պարանոսներից եկելով: Եւ մի՛ թե՛ հնարավոր չէ մո՛տ վաճառել իշարն պարանոսից առաջ և եկող:

Ազգայի Կյուրեղյան

Խմբագրության կողմից

Նամակից մտածված դուրս թողեցինք եկեղեցու անունը, քանի որ երեւոյթը բնորոշ է մեր բոլոր եկեղեցիներին՝ ներառյալ Մայր տաճարը:

Նամակը մտածելու տեղիք է տալիս: Հավատացյալը չգիտի՝ ինչպես պահել իրեն եկեղեցում, դա, քերես, ոչ միայն հավատացյալների, այլև քահանաների թեւացումն է:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Պատասխանիչ՝ Ս. Էջմիածին Քրիստոնեական դաստիարակության և բարոցության կենտրոն

Գրանցման վկայական՝ 624, Դասիչ՝ 69333
Գլխավոր խմբագիր՝ Ստեփան Ստամբոլյան
Խմբագրության հասցեն՝ ք. Վարդաշատ, Ս. Գայանե եկեղեցի, Քրիստոնեական դաստիարակության և բարոցության կենտրոն
Ջեռախոս՝ (0+59) 56780

Մայր Աթոռ Ս. Էջմիածին տպարան
Ստոր. է տպագր. 1. 5. 2000 թ. Տպաք.՝ 2500 Գինը՝ 50 դրամ